


ԵՐԱՅՈՒՆԻ ՊԵ ԱՄԻՉԻՍ

ՈՎԿԻԱՆՈՒ ՎՐԱՅ՝

ԳՐԱԴԹԱԿԱՆ ԱՅՆ ՆԱԽԱՄՈՒՏՔՆ



ԲԱ հասայ երեկոյն դէմ, արդէն ժամէ մ'ի վեր զաղթականաց նաւամուտքն սկսեր էր, և Քալիքոս՝ չարժական փոքր կամրիով մ'ի Նավայրին հետ միացած՝ կը շարունակէր աղիսա դիմել ըզ թըլուառութիւն, թափօր մ'անվերջ մարդկան՝ խմբովին դուրս կ'ելնէր հանդիպակաց շինուածէն, ուր Քանձաւորութեան փոխանորդ մ'անցագիրերը կը դնէր: Մեծագոյն մասը, ճնշովայի փողոցաց մէջ շներու պէս կծկած՝ մէկ կամ երկու գիշեր բացօթեայ անցուցած ըլլալով, խոնկէին և քնալից: Փորձաւորք, դիւղացիք, ստորեայ մանկիկներով կանայք, տղայք՝ որոնք դեռ ևս մանկական պատապարանին թանագեայ թիթեղնակը կախած ունէին կրծից վրայ՝ կ'անցնէին, գրեթէ ամէնքն ալ կրելով ընդ անթով գիւրաւ գունձ աթոռակ մը, ձեռաց մէջ կամ գլխոյ վրայ զանազանաձև պարկեր և պայուսակներ, գիրկ մ'անկողնոց և ծածկոցներու, և տոմսակն՝ անկողնեկին թուանը շանով՝ չրթնաց մէջ պնդած: Աղքատ կանայք ոմանք՝ որ մանուկ մ'ունէին մէջ մ'ի ձեռին, իրենց խոշոր փաթեթներն ատամայի վեր կը բռնէին. սանդղաւոր պառաւ գեղկուհիք՝ կամրիին խոտորնակի դրուած գերաններէն չտանառելու համար չըլագգեստիկը վեր առնելով՝ կը ցուցնէին մերկ և վտիտ սրունքներ, բազումք բոկոտն էին, և կոշիկները վզերնին կախուած կը տանէին: Մերթ ընդ մերթ այն շուառութեան միջէն կ'անցնէին տեսալք՝ վաղելու փողեպակ վերարկ կունեցող, քահանայք, տիկնայք՝ փետրաւոր խոշորով, որոնք ունէին ի ձեռին կամ շնիկ մը, կամ գլխարկի տուփ մը, կամ լեվիի վաղնիւնց տպագրութեան պատկերաւ դարդ փռանկերէն վէպերու ծրար մը: Յետոյ յանկարծակի մարդկային թափօրը կ'ընդհատուէր, և բիրերու և հայհոյանաց մրրկի մը տակ՝ յառաջ կու գար կովուց և խոցերու նախիր մը, որոնք հասած ի նաւն, աստ և անդ խոտորելով և շրտնելով, կը խառնէին պոչիւն և պապալը նաւուն առաջն եղած ձիոց խխնջիւնիւն, նաւաւատեաց և բեռնակրաց աղաղակին հետ և չողջըարծ կռնկան դռնիցեցուցիչ շառային՝ որ օդուն մէջ կը բարձրացնէր սնտուկներու և արկղներու շեղիւր: Յետ որոյ պանդխտելոց շարքը կը սկսէր վերստին. խալիւր ամէն կողմէն դէմքեր և զգեստներ, տիրազգած աչօք հուժկու երիտասարդներ, պատառառու և աղտեղի ծերեր, յղի կանայք, ուրախ աղկլուք, զուարթ պատանիք, շաղկանց չիւնականք, և տղայք տղայոց ետէն, որ այն ինչ ոտք դրած յարկին վրայ, այն նաւորաց, սենեկապանից, օպայից, ընկերութեան պաշտօնատարաց և մաքսաւ տան պահապանաց խառնակութեան մէջ՝ ընդարմացած կը մնային, կամ կը մնա

Սրդէն ծանօթ և աղիսա խալալի նշանաւոր հեղինակն Նդմենդ Դէ-Ամիլիա իւր Կ. Պօլս և Սիք գրութեամբք, որոնք թարգմանուելով հայ հասարակութեան մէջ մեծ ընդունելութիւն գտան: Ներկայ գրութիւնս է յԱմերիկա եղած խալալ կան զաղթականութեանց վրայ, և կը կոչուի Ball' Oceano.

1. Հանրային Նաւարկութեան Ընկերութեան Գալիքոս լէ:

լորէին իբրև բազմամբօխ հրապարակի մը մէջ, Նաւամուտքն սկսելէն երկու ժամ յետոյ, մեծ շողմանաւ, միշտ անշարժ, նման ահագին կիտաղեղ ձկան մը՝ որ ժովպուռնքն ատամացէ, կը ծծէր տակաւին խաւարական արիւն:

Հետ զհետէ ելնող գաղթականք՝ կ'անցնէին փոքր սեղանի մը դիմաց, ուր նստած էր Յանձնակատար սպայն, որ զանոնք կը բաժնէր խումբ խումբ վեցի, ասելէ՜ կողուած, գրելով անունները տպագրեալ թղթոյ մը վրայ, զոր կը յանձնէր երիցագոյն նաւորդին՝ որ երթայ անով ի խոհանոց կերակրոյ ժամերուն ու տեղիք առնելու համար: Վեց անձերէ նուազագոյն ընտանիք՝ իրենք զիրենք արւ. ձանազրել կու տային ծանօթի մը կամ առաջին հանդիպողին հետ. և այն արձաւ նագրութեան գործոյն ժամանակ՝ ամէնուն վրայ կ'երևէր սաստիկ երկիւղ մը խարուելու տղայոց և մանկանց համար կէս կարգերու և կարգի քառորդներու հաշուոյն մէջ, անյաղթելի կասկածն՝ որ կ'ազդէ գերացոյն այն ամենայն մարդ՝ որ գրիչն ի ձեռին ունենայ և արձանագիր մ'առնէ: Կը ծագէին վէճեր, գանգատներ կը լուսէին և բողբոջ: Ապա ընտանիք կը դատուէին, արք մի կողմն, և կանաչք և սողաչք կը տարուէին ուրիշ կողմն իրենց ննջարաններն: Եւ գուցէ կը շարժէր տեսնելով այն կանանց դանդաղաբար դժուարելանքի սանդղիկներէն ինչնէն, և առ խարխափ յառաջելն այն ընդարձակ և ցած ննջարաններէն, այն չերամի սենեկաց բաժանուածոց նման յարկաձև զետեղուած անթիւ անկողնիկներու միջէն, և ոմանց իրենց միտքը չըմբռնող նաւաստիէ մը կորուսած կապուցի մը վտագին համար պաճանջելն, և շատից երթալ և գալն ըստ պատահման, անձկութեամբ նայելով բոլոր այն անծանօթ ուղեկցաց, անհանգիստ իրենց պէտք իրենք ևս այն ամբողջութենէն և անկարգութենէն չիտրած: Առաջին յարկն իջնողներէն ոմանք, տեսնելով ուրիշ սանդղիկներ որ կ'երթային ի ստոր մթութեան մէջ, կը հրաժարէին գետ ևս ինչելու: Բացուած իշանիւրէն տեսայ կին մը, որ՝ երեսն անկողնիկան մէջ՝ կողողագին կը հեծեծէր. լսեցի որ կ'ըսէին՝ թէ նա մոռնելէն քանի մը ժամ յառաջ անոր մէկ աղջիկ զառակը զոգցեալ յանկարծաւ մահ եղած էր, և թէ իւր ամուսինն ստիպուած էր թողլու զգիտկը նաւակայից Հառարակաց Ապահովութեան պաշտօնարանին մէջ՝ անկելանոց տարուելու համար: Կանանց շատերը կը մնային ի խոնարհ. ընդհակառակն մարդիկ, իրենց գոյքը վար դնելով, վեր կ'եննէին, և կը յենուին նաւուն շրթանցը: Հետ ատքերը շարժ թան: Գրեթէ ամէնքն ալ առաջին անգամ կը գտնուէին մեծ շոգեհատ մը վրայ՝ որ իրենց համար պէտք էր ըլլալ իբրև լի զարմանայեօք և զաղտնեօք նոր աշխարհ մը, և ոչ իսկ մէկը բոլորտիքը կամ վեր կը նայէր կամ կը կենար նկատելու հարիւր հիանալի իրերէն մին միայն՝ զոր ընաւ չէր տեսած: Ոմանք կը գննէին ուշի ուշով որ և իցէ առարկայ մը, ինչպէս մեքանորքի մը պայտուարի կամ քրտակար, կամ անտուկի մը վրայ գրուած թիւ մը. այլք կը կրծէին խնձոր մը կամ կը պատուէին նկանակ մը, ամէն խաժուածին գննելով զայն հանգարտութեամբ, ինչպէս թէ ըրած ըլլային իրենց ախտին դիմաց: Կարմրեցած էին քանի մը կանանց աչկունքը: Կային պատանիք՝ որոնք բարձրաւ ձայն կը ծծաղէին, սակայն կը հասկցուէր թէ յոման քանագրօսիկ էր ուրախ խոթիւնը: Մեծագոյն մասը խոնրութիւն միայն և անզգայութիւն կը ցուցնէր: Երկինք ամպոտած էր և կը սկսէր նսեմանալ:

Յեղակարծուց մոլեգին աղաղակներ լսուեցան անցագրոց պաշտօնարանէն և տեսնուեցաւ ժողովրդեան ընթանալն: Ի վերջոյ դիտցանք որ գեղացի մէք,

1. Ռույն, կերակուր այլ և այլ անձանց, յորոց իւրաքանչիւրը կը հառուցանէ իւր գինն: — Ե. Թ:

կնոյմովն և չորս դաւակներով, զորս բժիշկը մորթախտէ վարակուած ճանչցեր էր: Հայրն առաջին հարցափորձից՝ խենթ յայտնուած էր և նաւամուտքն իրեն արգիւեալ ըլլալով, կատողեր էր:

Ինչպայրին վրայ կային հարիւրի մը չափ անձինք. գաղթելոց ազգականները՝ սակաւաթիւք, բազմագոյնք՝ հետաքրքիրներ, և չատերը՝ այն բաժանմանց ընդելացեալ բարեկամք և արենակիցք նաւաստեաց:

Երբ ամենայն նաւաւիւղք զետեղեցան, նաւուն վրայ տիրեց անընթէ հանդարտութիւն մը, որ շոգեշարժ մեքենային խուլ շառչալիւնը լսելի կ'ընէր: Գլուխներէ ամէնքն ալ տախտակամածին վրայ էին՝ խումբ առած և անմոռուչ: Այն սպասելոյ յետին վայրկեաններն յաւիտենական կը թուէին:

Հուսկ ուրեմն միանգամայն լուսեցան նաւուն խեղքն և ցուկը նաւագից աղաղակելն. — Դուրս, ով որ նաւորդ չէ:

Այս խօսքերէն զոգում մ'ընթացաւ Գալիլէոսի մէկ զլիւնն ցմիւսը: Փանի մը վայրենեւն բոլոր օտարք իման, կամուրջն ի բաց առնուեցաւ, մալուխները վերջուեցան, սանդուղը բարձրացաւ: Լուսեցաւ շիւնն մը, և շոգեման օկոսաւ խլորտի: Այն ժամանակ օմանք ի կանանց յարտատու լուծուեցան, երիտաւարդներ՝ որ կը ծիծաղէին՝ ծանր կերպ առին, և տեսնուեցաւ մինչև ցայնժամ անկարեկան մօրուսաւոր մարդիկ՝ որ մէկ ձեռուրնին տարին իրենց աչացքով շրջալսէին: Այս յուզմանց կարի իմն ընդդիմապատկեր կը կազմէր խաղաղաւէտ ողջոյնները՝ զորս կը փոխանակէին նաւաստիք և սպայք ինչպայրին վրայ հաւաքեալ բարեկամաց և ազգականաց հետ, իբրև թէ մեկնէին ի Սպէցիա: — Ա'նքան բաներ: — Կը յանձնեմ այն ծրարին համար: — Ըսես ձեռնալի որ յանձնարարութիւնը կը կատարեմ: — Դիր զայն նամակատունն ի Մոնտէվիդէոյ: — Ողջ կեցիր: — Ոմանք, հազիւ հասած, դեռ ժամանակ ունեցան նետելու սկիւտի փնջեր և նարինջներ, որոնք օդէն նաւուն մէջ բռնուեցան, սակայն վերջինք ինկնել ի ծով: Կը փայլէին քաղաքին մէջ լոյսեր: Նաւահանգստին կէս միութեան մէջ շոգեման յուշիկ կը սահէր, զոգեցա զանխաղաղ իբրև թէ զոգունի մարդկեղէն մարմնոց բեռ մ'ի բաց տանէր: Մղեցի ես զիս մինչև նաւին գլուխն, հոն ուր աւելի թանձրախումբ էր ամբոխն, որ դարձեր էր զլիւծիկն դէպ ի ցամաք, նկատելու ձենովայի ամփիթէատրոնն, որ դամ քան զգամ արագապէս կը լուսաւորուէր: Սակաւք կը խօսէին, դաշն ձայնիւ: Այտ և անդ խաւարին մէջ՝ կը տեսնէի զրկապինդ մանկիկներով նստած կիներ, իրենց դէմ լուրջ թողած լքած ձեռուրներնուն մէջ: Նաւառաջից դղեկին առնութեմ՝ կերկերեալ և մեծաւոր ձայն մ'աղաղակեց երգիծական բարբառով. — Կեցցէ՛ Խալիա. — և աշուրներս առնելով ի վեր, տեսայ երկայնահասակ ծեր մը, որ բռնցքին կը ցուցնէ հայրենեացն: Երբ նաւահանգստէն դուրս ելանք գիշեր էր:

Այս տեսարանէս թախած, դարձայ խելաց կողմն, և ինչ առաջին գասուն ննջարանին մէջ խցիկս փնտռելու համար: Հարկ է ըսել որ այս ընդծովեայ տեսակ մ'օթեաններու մէջ էլքը՝ կը նմանի դժբաղդաբար խորանման բանտէրու մէջ առաջին մուտքի մը: Փայտեղինաց աղային արտաշնչութենէն, ձիթաւառ ճրագներու ննխութենէն, պուկարի կաշու չառէն և տիկնանց անոյշ բուրաններէն տոգորուած՝ այն անձուկ և դնապոյցն սրահներուն մէջ, գտայ զիս բազմազգաղ մարդկան երթևեկի մը մէջ, որ կը խլիւն յիրեբաց սենեկապաններն և սենեկապանուհիք՝ շինական այն անձնատիրութեամբ որ յատուկ է ուղեւորաց առաջին տեղաւորման թափոյն ժամանակ: Այն աստ և անդ անհասարար լուսաւորեալ խառնակութեան մէջ, տեսայ հարևանցիկ խարտիչազդ տիկնոյ մը ծիծաղկոտ դէմքն, երեք կամ չորս թուի մօրուեղներ, բարձրահասակ քա-

վանայ մը, դայրացած սենեկապանուհւոյ մը լիբր լայնի երեսն, և լսեցի ճննուհերէն, փռանկերէն, խտալերէն, տպանիերէն խօսքեր: Սրահի մը դարձուածքին հանդիպեցայ խափիկ կնոջ մը: Խցկանէ մը կ'ելնէր վերնաբամբ երգչի ձայնի մը խաղերգութիւնն: Եւ այն խցկան դէմ յանդիման գտայ իմս, վեց խորանարդ մետրի չափ վանդակ մը, մէկ կողմէն Պրոկուտի անկողին մը, միւսմէն բազմոց մը, և երրորդին վրայ վարսավիրայի հայելի մը, որմոյն մէջ ազուցիկ կոնքի մը վրայ դրուած, հաւասարակշիռ ճրագի մը մօտ, որ կը տատանէր ինձ ըսելու նկատմամբ մը. Ինչ յիմարական գաղափար ունեցար դու յԱմերիկա ուղեռելու: Բազմոցին վրայ կը նշողար բոլորչի պատուհանիկ մ'ապակեղէն մեծ աչքի մը նմանակ, յորում իբրեւ մարդկային աչքի մը մէջ կառուցի բիրբրս, որ ակնարկէր ինձ՝ հեգնական նշանակաւ մը: Եւ արդարեւ, այն հեղձուցիչ սենեկին մէջ քանակնորս գիշեր քնանալ ունենալու գաղափարն, տաղտկութեան և այրեցեալ գօտւոյն ջերմութեան, և գլուխս գէշ օդոյ օրերուն որմոց ընդհարկանեւ լու նախազգացումն և անհանգիստ կամ տրտում հազար մտածութեանց՝ զորս պիտի ստիպուէի հոն ներսն որոնալ վեց հազար մղոն միջոցի մէջ ... Սակայն այժմիկ զղջանալն անօգուտ էր: Նայեցայ պայուսակներուս, որ այն վայրկեանն ներուն ինձ այնքան բաներ կ'ըսէին, և ինչպէս իմ տանս յետին ողջ մնացած հաւատարիմ շուներս, փայփայեցի զիրենք. աղաչեցի Սատուծոյ որ զղջալ չտայ ինձ Ապոլոնիոսի ընկերակցութեան մը գործակատարի մ'առաջարկը մերժելուս համար, որ մեկնելէս օր մ'առաջ եկած էր զիս հրապուրելու. և օրհնելով ի սրտիս բարի և հաւատարիմ բարեկամներս՝ որ մինչև վերջին բուպէն քովս կեցեր էին, իմ հայրենեացս սիրային ծովէն որսորուած, քնացայ:

Շարունակելի

ՏԱՐԵՐՔ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՆ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

2. ՄԱՆՈՒԵԼ 4. ԲԱԶՈՒՆԵՐ

Ի ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՒՍԵԼՆ